



53. ԹԱՄԲԱԼԸ

Ժամանակով մի մարդ կար, ըդրան ուներ մի տղաւ. Էդ մարդը շատ հարուստ էր, լավ ուտում; լավ խմում ին: Տղեն որ մենծացավ, դառավ տասնօխտ-տասնութ տարեկան, հերը պսակեց, շատ խելոք աղջիկ ուղեց:

Մի քանի տարուց եղք հերը մեռավ: Էդ տղեն մի սովորություն ուներ՝ ամառ ձմեռ թունդրի միջից գուա չէր գա, ասում էր. «Մըրսում եմ»:

Կնիկը գնաց հարևաններին ասեց, թե.—Մարդս հոր թողած կարողությունը կերավ, հըմի ամառ-ձմեռ թունդրի միջիցը գուա չի գալի, ասում ա. «Մըրսում եմ», տանը հաց չկա, չեմ գիտա՞ ի՞նչ անենք:

Հարևաններն ասում են.— Գնա՞ շամիչ առ, լցրա թունդրի շըրթիցը մընշանք տան դուռը. դու տափ կաց, եր որ ինքը կտենա շամիչը՝ կհավաքի, կուտի, կհասնի մնշանք տան դուռը, դուռը բաց կանի, դու կգա. դու դուռը եդ կանես քամակիցը, ինչքան ձեն կտա՛ բաց շես անի, ո՞ւ էթում ա, թո՞ղ էթաւ:

Կնիկը էթում ա շամիչ առնում բերում, թունդրի շըրթից շաղ ա տալիս մնշանք տան դրսի դուռը, ինքը տափ կենում: Տղեն թունդրի միջին կաննում ա, որ դինշանա, տենում ա՝ շամիչը թափած ա. ձեռը. քցում յավաշ-յավաշ հավաքում ա, ուտում ա, ձեռը որ չի

հասնում, թունդրից դուս ա գալիս, պուպուզ անելով հավաքում ա, ուտում ա, մընշանք գալիս ա տան դուռը: Եթ որ հասնում ա տան դուռը, ձեռը քցում ա՝ դուռը բաց ա անում, տենում ա՝ դրսն էլ թափած կա, հավաքելոն դրսն ա դուս գալի: Կնիկը հասնում, դուռը շինում ա:

Տղեն ձեն ա տալի:— Վա՛յ, ոններս ցուրտը տարավ, վա՛յ ոններս ցուրտը տարավ, ա՛յ կնիկ, դուռը բա՛ց արա:

Կնիկն ասում ա:— Բո՛լ էլավ թումդրի միջին նստես, գնա՛ ման արի, աշխատա՛նք արա:

Մարդն ասում ա:— Ա՛յ կնիկ, ես մրսում եմ, ո՞ւր էթամ:

Կնիկն ասում ա:— Էս օրը ամառ՝ խի՛ պտի մրսես, գնա քեզ հմար ման արի, աշխատա՛նք արա:

Մարդը ճարը կտրած քուշեն բռնում, էթում ա: էթում ա, տենում՝ մի աղլուս ըտե վեր ընկած ա, աղլուսը վեր ա ունում: Աղլուսն էլ հակառակին թագավորի աղջկա աղլուսն ա ըլնում: Թագավորի աղջիկը իրա քառասուն զարավաշովը երոր գալիս ա րախշեն ման գալու, աղլուսը վեր ա ունում իրա գլխից, քցում ա ծառի ճըղքին, քամին վերնում ա, քցում ա պատի էն յանը:

Էդ տղեն գտնում ա, վեր ա ունում, բերում ա կնկանը, ասում:— Ա՛յ կնիկ, էս աղլուսը գտել եմ:

Կնիկը աղլուսը ձեռիցը առնում ա, թամաշ ա անում, տենում ա՝ թագավորի աղջկա աղլուսն ա, ասում ա:— Էս թագավորի աղջկա աղլուսն ա, տա՛ր տու թագավորին, մի քանի մանեթ փեշքաշ կտա, ո՛չ կարամ կապի գլուխս, ո՛չ կարաս ծախի:

Մարդը աղլուսը վերնում ա ու թագադան եղ ա դառնում: Բերում ա ընենց մի հարմարին տեղ, տենում ա պատր ճաքած ա, կոլում ա մի թղթի մեջ, դնում ա էդ պատի ճղակը: Մի քանի ոտ փոխում ա, տենում է՝ դալալը ընկած ձեն ա տալի: Շն'վ որ թագավորի աղջկա աղլիսիցը խաբար ա՝ քսան հինգ մանեթ մուշտուլու կաս:

Տղեն մոտանում ա դալալին, ասում ա:— Ես գտել եմ:

Դալալը ասում ա:— Տն՛ւ, քու մուշտուլուդ տա՛մ:

Ասում ա:— Թեզ խի՛ եմ տալի, կտանեմ, թագավորին կտամ, էրկսով իրար հետ էթում են, հասնում են թագավորի կուշտը, դալալն ասում ա, թե:— Աղլուսն էս տղեն ա գտել,

Թագավորն ասում ա:— Հանա տո՛ւ, քու մուշտուլուը տանք:

Տղեն ասում ա.— Իմ մոտին որդիա՞ն ա:

Թագավորն ասեց.— Բա խի՞ ես էկե:

Տղեն ասեց.— Ես ուամ քցող եմ, կրցեմ. կդտնեմ:

Թագավորն ասեց.— Մզար դու ըտենց շնո՞րբ ունես:

Ասեց.— Ես լավ ուամ կրցեմ:

Ասեց.— Դե քցա՛, տենանք:

Տղեն ձեռի էրեսին թամաշ արեց, ասեց.— Աղլուկսը ֆլա՛ն քու-
շի պատի ճղակումն ա:

Թագավորը մարդ զրկեց, որ բերի: Ասեց.— Ո՞ր դուզ էլավ,
մենծ փեշքաշ կտամ քեզ:

Դաւալը վե կացավ, զնաց բերեց:

Թագավորը երոր ազյուկսը տեհավ, զարմացավ, ասեց.— Երեւ-
լի իմաստուն ես դու, մինչև հմի ո՞րդի իր, որ քու անումը չէի լսե:

Ասեց.— Ես մի քյասիր մարդ եմ, իմ անումը ո՞վ պտի լսի:

— Ըսօրվանից,— ասում թագավորը,— քու ամսականը քսա-
նըհինդ ոսկի, ա, կե՛ր, խմա՛, իմ կշտին կա՛ց:

Տղեն զեր ա կենում, զալիս ա տուն, կնկանն ասում ա.— Աշ-
քըդ լի՛ս:

Կնիկն ասում ա.— Հը՛, ի՞նչ խարար ա:

Մարդն ասում ա.— Էլ ի՞նչ խարար պտի ըլնի, ամիսը քսանը-
հինդ ոսկի պտի առնեմ, լավ ուտեմ, լավ խմեմ, ման գամ. էլել
եմ թագավորին վեղիր:

Կնիկն ուրախացավ, ասեց.— Տեհա՞ր, մի բուռ շամիչը քեզ խել-
քի բերեց, թամբալություն իր անում, թոնդրի միշից դուս վեր զալի-
քա էն վախտը, որ ասում իր ոմբսում եմ», բա հմի խի՞ չես
մրսում:

Արանքը քաշեց մի տասն օր, թագավորը կանչեց էդ տղին, ա-
սեց.— Է՛թանք ման գալու

Վեր են կենում, էթում են: էթում են թագավորի բաղը: Երոր
մտնում են ներսե, թագավորը էդ տղին հրամայում ա, թե.— Դու
էդ յանովը զնա՛, ես էլ էս դհովը ման զալոն գամ:

Թագավորը ասում ա. «Արի մին էլ փորձեմ սրա իմաստու-
թյունը: Վարդը քաղում ա, բոի միշին պահում, էթում ա. իմաստուն
վեղը կուշտը»

— Հը՛,— ասում ա,— բոխս միշինն ի՞նչ ա, իմացի՞:

Տղեն տենում ա, որ գլուխը պտի թռնի կնկա պատճառովը.

անումը Գյուլի¹ ա ըլնում, ասում ա.— Նո՞ր ք..... Գյուլի հոր
կոտին:

Թագավորը բռւզ բաց ա անում, ասում ա.— Դու ի՞նչ իմա-
ցար, թե իմ բռինը գյուկ էր:

Տղեն ասում ա.— Իմաստում ի, իմացա:

— Որ ըտքան իմաստուն ես, ամսականդ շինեցի եռեսուն ոսկի:
Արանքը անց ա կենում մի տասն օր, թագավորի խաղիննն օխ-
տը հոգի կտրում են, ամեն մեկը մի ջվալ ոսկի են տանում:

Թագավորը կանչում ա էս իմաստուն վեղրին, ասում ա.— Խա-
ղիննս կտրել են, օխտը ջվալ ոսկի են տարե, յա' պըտի գտնես, յա'
գլուխոդ կկտրեմ:

Ասեց.— Քառասուն օր ժամանակ տո՛ւ, գտնեմ:

Ասեց.— Լա՛վ, քառասուն օր քեզ ժամանակ:

Տղեն գլխին տալով էկավ տուն, ասեց.— Կնի՛կ, գլուխս կե-
րար, թագավորի խաղիննն կտրել են. ասում ա. «Յա՛ պտի գտնես-
յա՛ գլուխոդ կկտրեմ»: Ես ո՞րդիան գտնեմ: Թեղ հաց շինա ուտեմ,
մի քիլ քնեմ, վեր կենամ, գլուխս առնեմ, փախնեմ:

Կնիկը վե կացավ, օխտը ձու խաշեց, բերեց գրեց մարդի առա-
ջը: Հենց էդ վախտն էլ թագավորի խաղինի գողերը, օխտը հոգի,
իմացել ին, որ թագավորը թամրահ էր արե էս վեղրին՝ գտնելու,
էկել ին կտուրը, որ անկաջ անեն, տենան իրանց անումը տալի՛ս ա:

Օխտը հոգուց վեցը նստել ին դրաղ, մեկն էկել էր հերդիկի կուշ-
տը, պըարզել էր. տեհավ՝ ձեն-ձուն չկա, վե կացավ, որ էթա, էր
վախտը իմաստուն վեղիրը ձվի մեկը կերավ, ասեց. «Էս մեկը
գնա՛ց: Էս էլ մի բան չի»:

Գողը լսեց, զարմացավ, գնաց հընկերներին ասեց, թե.— Վե-
զիրն իմացավ:

Էն մեկել հընկերը վե կացավ էկավ:

Էլի վեղիրը մի ձու կերավ, ասեց.— Էս էլ էրկուսը դնա՛ց, էս
էլ մի բան չէր:

Էդ գողը գնաց հընկորտանցը պատմեց, թե.— Դրուստ որ իմաս-
տուն մարդ ա, իմացավ իմ էթալը:

Հտենց օխտն էլ էկան, գնացին՝ տեհան, որ իմաստունը իմա-
ցավ նրանց գալն ու էթալը:

¹ Վարդ (Ս. Բ.):

Իրար միջի խորուրդ արին, վեր էկան ներքև, վեզրի դռւուր ծեծեցին, վեզիրը դուս էկավ դուռը, օխտով էլ ընկան վեզրի ոնները, թե.—Վիրկ ա՛ստված, ներքև դո՛ւ, մեղ աղատա՛, թաղավորի խազինն մենք ենք կտրե՛:

— Էա՛վ, — ասեց վեզիրը, — ես գիտամ, որ դուք եք կտրե՛, համա որ էկաք ոններս ընկաք, ձեր անումը շեմ տա, կասեմ՝ ես ուամ եմ քցե, դուել եմ: Դուք զնացե՛ք, մի չվալ ոսկին ձեզ, վեցը բերեք:

Գողերը ուրախացան, զնացին վեց շվալ ոսկին շալակեցին, բերին զրին վեզրի տունը:

Վեզիրը առավոտը լիսը բացվեց, վե կացավ, զնաց թագավորի մոտը, ասեց.— Գտել եմ, թագավորն ապրած կենա, հրեն մեր տանն ա շվալները, դրկա, բերիլ տու:

Թաղավորը շատ ուրախացավ, ասեց.— Դու քառասուն օր ժամանակ իր ուզե, ո՞նց էս գշեր գտար:

— Ըսամ քցեցի, գտա, էլ խի՞ եմ քառասուն օր մնում:

Ասեց.— Իրեք շվալը քեզ, շորսը բե՛, մեղ բոլ ա:

Համրալին վե կալավ, տարավ տվեց շըլակները, բերեց, տվեց թագավորին:

Թագավորն ասեց.— Ո՞ր ըստան իմաստուն ես, քու ամսականը շինում եմ քառասուն ոսկի:

Տղեն թագավորին գլուխ տվեց, զնաց իրա տունը, կնկանն ասեց.— Բախտի բերմունքով էս ա իրեք անդամն ա, աղատվում եմ, հմի ամսականս շինել ա քառասուն ոսկի, էս մեղ բոլ ա, մի բան մտածենք, բալքի դլյոներս աղատենք:

— Դե ի՞նչ մտածենք, — ասեց կնիկը:

Մարդն ասեց, թե.— Ա՛րի ես ինձ զնեմ հիվանդությունը, ասեմ. «Հիվանդությունը իմաստությունս տարավ»:

— Էա՛վ, — ասեց կնիկը, բերեց տեղաշորը քցեց, մարդը պառկեց: Խարարը զնաց թագավորին, թե վեզիրը հիվանդացել ա:

Թագավորն ինչքամ բժիշկ դրկեց, չկարեցան ճար անի, թագավորը վե կացավ, իրա ոտուն էկավ:

Էկավ նստեց վեզրի կշտին, վեզիրը աշքով արեց, կողքի մարդ զիքը քաշվեցին, նո՞ր թագավորը հարցրեց, թե.— Քու ցավն ի՞նչ ա, որ բսթան բժիշկը բան շեն հասկանում:

Ասեց.— Թագավորը սաղ ըլնի, էս իրեք անգամ ա էդ փորձանքները, որ քեզ պատահում ա, ես իմաց եմ տալի, շարքերը ասում

են. «Մենք թագավորին ուղղում ենք վնաս տանք, դու խի՞ շես թողում»։ Ես քանի գշեր առաջարվում են, ինձ ընքան ծեծում են, որ վրես հալ չի մնացել, խելքս գլխիցս գնացել առ, ցնորել եմ, էլ իմաստություն չի մնացել։

Թագավորն. ասեց.— Բա՛ն չկա, ընկնց արա, ես ու դու իմանանք, էլ մարդ չիմանա, ես քու ամսական քառասուն ոսկին կտամ։

